«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն՝ «Կապանի թիվ 6 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Մարինե Կարապետյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

ԹԵՄԱ 1. Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում 6

1. 1 Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերը երեխայի զարգացման հարցում 6

1.2 Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում 10

1.3 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցություն 12

Եզրակացություն, առաջարկություն 19

Գրականության ցանկ 20

Ներածություն

Երեխայի լիարժեք զարգացման, նրա անձնավորության ձևավորման գործընթացների արդյունավետությունը պայմանավորված է սոցիալական բոլոր ինստիտուտների մանկավարժական ներգործության փոխազդեցությամբ: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի, նախադպրոցական կրթական հաստատության և դպրոցի հաջորդական և փոխպայմանավորված մանկավարժական ներգործությունը: Նշված սոցիալական օղակների, հետևաբար և կրթադաստիարակչական համակարգերի մանկավարժական աշխատանքների միջև գոյություն ունեցող հաջորդականությունը կառուցվում է փոխներթափանցման սկզբունքով և ապահովում է երեխայի դաստիարակության և կրթության միասնականությունն ու անընդհատությունը: Մանկավարժական աշխատանքների հաջորդականությունն իրականացվում է կրթության բովանդակության փոխանցման և յուրացման աստիճանականության և դաստիարակության գործընթացում երեխային ներկայացվող պահանջների միասնականության ճանապարհով: Նշված մանկավարժական համակարգերից յուրաքանչյուրին բնորոշ է յուրահատուկ մանկավարժական ներգործություն և մի շարք ուսումնադաստիարակչական խնդիրների իրականացման ինքնատիպ ընթացք: Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում: Ընտանիքն է սոցիալականացման առաջին օղակը, ուր սկիզբ է առնում երեխայի սոցիալական էությունը: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորության գծերը, դաստիարակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր: Ընտանիքը մեծապես նպաստում է երեխայի ինքնահաստատմանը սոցիալական միջավայրում, նրա ստեղծագործական ներուժի և անհատականության բացահայտմանը: Ընտանիքն այն կայուն սոցիալական օղակն է, որն ուղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքում: Ժամանակակից մանկավարժությունն ընդգծում է ընտանիքի և ընտանեկան դաստիարակության գերակայող դերը երեխայի դաստիարակության և նրա անձնավորության ձևավորման գործում: Մանկապարտեզը <այլ նախադպրոցական կրթական հաստատությունները կոչված

են իրականացնելու նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական դաստիարակությունը: Նախադպրոցական կրթօջախների հիմնական մանկավարժական գործառույթնը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում, նախադպրոցահասակ երեխաների հասարակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Մանկապարտեզում է երեխան սկսում հաղորդակցվել և համագործակցել, որոշումներ կայացնել, համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքի հետ: Դպրոցը հանրակրթության բազային օղակն է, դպրոցահասակ երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական հաստատությունը, կրթված սերնդի դարբնոցը: Դպրոցը հասարակության կարևորագույն բաղադրիչն է, այն ինտեգրվում է հասարակական ամբողջական օրգանիզմ և դառնում նրա անբաժանելի մասը: Կարևորվում է դպրոցի ուղղակի մասնակցությունը քաղաքակիրթ հասարակության կայացման գործընթացում, արժանապատիվ քաղաքացիներ ձևավորելու պատասխանատու գործում:

Այսպիսով, վաղվա առողջ սերնդի կայացման համար չափազանց կարևոր է կրթական բոլոր հաստատությունների գործիմաց համագործակցությունը: Մանկավարժական ընդհանուր գործընթացի արդյունավետության երաշխիքը համագործակցության համար «բաց» կրթական հաստատություններն են: Հատկապես կարևորվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավումը մանկավարժական գործընթացին: Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվմասնակցության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործընթացին, հանդես գա մանկավարժական գործընթացի սուբյեկտի, մանկավարժի օգնականի և աջակցի դերում, հրաժարվելով պահանջատիրոջ կարգավիճակից: Ժամանակակից մանկավարժության կողմից առավել քան կարևորվում է «ընտանիք-մանկապարտեզ-դպրոց-համայնք» սոցիալական ինստիտուտների միջև համագործակցության նոր ձևերի մշակումը, փոխադարձ կապի և պատասխանատվության հաստատումը: Համագործակցության պայմաններում դրական փոփոխությունների են ենթարկվում «ծնող-երեխա-մանկավարժ» փոխհարաբերությունները, որոնք կրթական գործընթացի խթանման և դրա արդյունավետության հիմնական գործոններից մեկն է: Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է

հանդիսացել,սաների կրթական աշխատանքի կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում,մանկավարժական աշխատողի և սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների)հաստատուն կապի անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը՝

- Կապ ստեղծել մանկավարժական աշխատողի(մանկապարտեզի) և սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) միջև:
- Ներգրավել ծնողներին մանկապարտեզում կազմակերպվող միջոցառումներին:
- Բարենպաստ պայմաններ ստեղծել սաների լիարժեք սոցիալական զարգացման,դաստիարակության և կրթության համար:
- Ապահովել ընտանիք-ծնող համագործակցությունը:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, 3 ենթագլուխներից, եզրակացությունից: Ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 20էջ:

ԹԵՄԱ 1. Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

1. 1 Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերը երեխայի զարգացման հարցում

Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է, ուր դրվում են առանձնահատկությունները երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:

«Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը, նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին» (Ռաֆֆի): Յ.Ա.Կոմենսկին նշում էր, որ «մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր, արձակուրդ»: Վերջապես, «երեխան ընտանիքի հայելին է» սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում: Ընտանիքի գործառույթներն ու խնդիրները բազմաթիվ են: Ընտանիքի հիմնական գործառույթներն են.

- վերարտադրողական,
- սոցիալ-տնտեսական,
- սոցիալականացման,
- հոգեթերապեվտիկ,
- դաստիարակչական:

Ընտանիքի կարևորագույն գործառույթները հիմնավորում են մարդկության գոյատևման ընտանեկան ձևի առավել պաշտպանվածությունը, հետևաբար և նպատակահարմարությունը:

Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերն հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման ու զարգացման գործում: Հոգեբան Ա.Ն.Լեոնտևը նշում է, որ «նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է

իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ»: Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ: Հղումի կաղապարը՝ [Ա.Ա.Մարության,Ա.Մ.Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» Երևան 2008] Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների գիտակցության ու վարքի ,նրանց աշխարհահայացքի, արարքների և սովորույթների վրա:Դաստիարակությամբ նշանակալիորեն պայմանավորվում են այն փոփոխությունները,որոնք մարդը կրում է ծնվելու պահից մինչև հասուն դառնալը:Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է: Հղումի կաղապարը' [Նախաշավիղ 1.2013]

Ընտանեկան դաստիարակության միջոցով լուծվում են երեխայի անձնավորության կայացման մի շարք խնդիրներ: Դրանք են.

- ստեղծվում են երեխայի լիարժեք զարգացման համար բոլոր հնարավոր պայմանները;
- ապահովվում է երեխայի հոգեբանական պաշտպանվածությունը և ձևավորվում է վստահություն աշխարհի հանդեպ:

զարգանում է երեխայի ինքնագիտակցությունը, ձեռք է բերվում սեռային պատկանելիության և արժանապատվության զգացողություն;

- ձևավորվում են կյանքի հմտություններ և դրական սովորություններ;
- յուրացվում են սոցիալ-բարոյական արժեքներ, ձևավորվում է կենցաղային մշակույթ (կուլտուրա);
- փոխանցվում են և յուրացվում ընտանեկան փոխհարաբերությունների նմուշներ,

ձևավորվում է ընտանիքի պահպանման և դաստիարակության որոշակի օգտակար փորձ:

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ:

Առաջին առանձնահատկությունը վերաբերում է ընտանեկան դաստիարակության մթնոլորտին: Այն չափազանց հուզական է, ընկերական և մտերմիկ: Ընտանեկան

դաստիարակությունն ուղեկցվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների սիրով և նվիրվածությամբ, փոխադարձ քնքշությամբ և հավատարմությամբ: Ընտանեկան դաստիարակության երկրորդ առանձնահատկությունը մանկավարժական ներգործության մշտական (տևական) բնույթն է: Ընտանիքում ստեղծվում են լավագույն պայմաններ երեխային հանգիստ, առանց շտապելու դաստիարակելու համար: Ընտանեկան դաստիարակության երրորդ առավելությունը երեխային՝ ընտանեկան խնդիրների լուծմանը, լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է: Ընտանեկան դաստիարակության սկզբունքները են՝

- մարդասիրության և գթասրտության,
- երեխայի հանդեպ սիրո և հարգանքի,
- ընտանեկան փոխհարաբերություններ կառուցելիս լավատեսության,
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատման,
- երեխային ներկայացվող պահանջների միասնականության,
- ծնողների հեղինակության անսասանության, նրանց կարծիքի գերակայության,
- հետևողականության և պահանջկոտության,
- երեխային ընտանիքի գործունեությանն ակտիվ ներգրավելու:

Ընտանեկան դաստիարակության կազմակերպումը վերընշված սկզբունքներով նպաստում է սեփական ուժերի մեջ վստահ, ազատ և ակտիվ երեխայի ներդաշնակ զարգացմանը, այնպիսի անձնային հատկությունների ձեռքբերմանը, որոնք օգնում են նրան կառուցելու իր վաղվա օրը, արժանապատիվ ապագան:

Կազմությամբ ընտանիքը լինում է.

- մակրոընտանիք՝ ավանդաբար կառուցված հայրիշխանության սկզբունքով;
- միջուկային (նուկլեար) կամ միկրոընտանիք՝ բաղկացած ծնողներից և երեխաներից;
- ոչ լրիվ ընտանիքներ, որտեղ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով բացակայում է ծնողներից մեկը: Մակրոընտանիքները տարբերվում են քանակական, սոցիալական և հոգեբանական բազմազանությամբ, մեկ հարկի տակ կարող են ապրել երեք և ավելի սերունդների ներկայացուցիչներ:

Ժամանակակից մանկավարժության մեջ առանձնանում են ծնողական դաստիարակության չորս հիմնական ոճեր'

1. Հեղինակավոր(դեմոկրատական):Հեղինակավոր ոճը ենթադրում է երեխայի հանդեպ ջերմ հույզեր և բարձր աստիճանի վերահսկողություն ծնողի կոցմից: Հեղինակավոր ծնողներն ունեն կյանքի մեծ փորձ և պատասխանատվություն են

կրում երեխայի դաստիարակության համար: Նրանք չեն պահանջում երեխայից ավելին, քան նա կարող է անել. ավելի շուտ՝ ուշադրություն են դարձնում զավակի կարգապահությանը:Ծնող-երեխա շփումը կառուցվում է դեմոկրատական սկզբունքով:

2. Ավտորիտար (լատիներեն՝ auctoritas- իշխանություն): Ավտորիտար դաստիարակության ոճը տարբերվում է երեխայի հանդեպ դրսևորվող մերժողականությամբ , կամ ցածր հուզականությամբ, ինչպես նաև ենթադրում է բարձր վերահսկողություն երեխայի նկատմամբ: Ավտորիտար ծնողների դաստիարակությունը հիմնված է հետևյալ կանոնների վրա.

Հեղինակություն, ծնողների իշխանություն, երեխաների լուռ (առանց ծնողին հակառակվելու) հնազանդություն, ցածր աստիճանի վերբալ հաղորդակցում, պատժի լայն կիրառում ՝ և հոր, և մոր կողմից, կոշտ և դաժան արգելքներ, պահանջներ:

3. Լիբերալ: Լիբերալ ոճի դաստիարակության առանձնահատկությունները կայանում են երեխայի հանդեպն ջերմ հուզական և ցածր աստիճանի վերահսկողության դրսևորմամբ: Դաստիարակության այս ոճը գրեթե չի ենթադրում որևէ պահանջ կամ օրենք:

4. Ինդիֆերենտ: Դաստիարակության ինդիֆերենտ ոճը բնութագրվում է երեխայի հանդեպ ցուցաբերվող հուզական սառնությամբ ծնողների կողմից: Երեխայի նկատմամբ վերահսկողությունը ցածր մակարդակի է, կարծես թե ծնողն ամեն կերպ «ետ է մղում իրենից երեխային», չի հետաքրքրվում երեխայի ցանկություններով և հետաքրքրություններով: Քիչ են նաև երեխայի հանդեպ պահանջները:

Յուրաքանչյուր դաստիրակության ոճ իր կնիքն է դնում երեխայի անհատից դեպի անձ ձևավորման գործընթացում: Չկան ճիշտ կամ սխալ դաստիրակության ոճեր: Ամեն մի դաստիրակության ոճ կարող է ունենալ և դրական, և բացասական ազդեցություն երեխայի անձի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է զգույշ մոտենալ այս կամ այն դաստիրակության ոճի ընտրության ժամանակ:

Յուրաքանչյուր դաստիրակության ոճի ուրճացումը, ծայրահեղացումը կամ չափից դուրս լայն կիրառումը կարող է բացասաբար ազդել երեխայի անձի ձևավորման և զարգացման գործընթացի վրա: Ինչ վերաբերվում է ավտորիտար դաստիրակության ոճին, ապա կարելի է նկատել, որ հենց ավտորիտար ծնողներ են շատ հաճախ երեխաներին ենթարկում բռնության:

Ինդիֆերենտ դաստիրակության ոճի դեպքում, երեխան կարող է ունենալ անպետքության զգացում, որ ինքը պետք չէ իր ծնողներին, ինչն էլ կարող է բացասական ազդեցություն ունենալ երեխայի ինքնագնահատականի վրա: Եվ այս նույն անլիարժեքության, անպետքության զգացումներն երեխան կարող է վերագրել նաև այլ մարդկանց, որ «եթե ես պետք չեմ իմ ծնողներին, ուրեմն ոչ մեկի էլ պետք չեմ», և այստեղից արդեն կարող են բխել տարբեր հոգեբանական խնդիրներ, օրինակ թերարժեքության բարդույթ, խրոնիկ դեպրեսիա, ընդուփ մինչև ինքնասպանության մասին մտքեր: Դաստիրակության այս ոճի ծայրահեղացումն ևս ոչ մի լավ բանի չի հանգեցնի: Հղումի կաղապարը' [Հոգեբան Անդրանիկ Բաբայանի հոդվածից 2015]

1.2 Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Երեխայի ուսուցման նպատակն է այնպես անել, որ նա ընդունակ լինի շարունակելու իր զարգացումն առանց ուսուցչի օգնության: Էլբերտ Հաբարդ Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է: Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում. Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոններով, նոր առօրյայով: Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը: Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը:

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն:
Յուրաքանչյուր երեխա ունի իր զարգացման տեմպը և ուրույն ոճը:

Երեխաների առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս:
Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը, մտածողությունը: Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և շփվելով: Մանկապարտեզը ստեղծում է այնպիսի միջավայր, որը

կնպաստի երեխայի զարգացմանը, իսկ դաստիարակը ստանձնում է խաղընկերոջ դերը։ Օրվա գործունեությունը պլանավորելիս՝ պետք է պլանավորել նաև խթանող, երեխաներին խրախուսող խաղեր։

Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա՝ ինչն է հասկանալի, ինչը՝ անհասկանալի նրանց։ Հիմնվելով դիտարկումների վրա՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ, որոնք կնպաստեն մտածելուն։ Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածություն է։ Մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուս ոլորտների առաջընթացին։ Կարևորագույն նախապայմանը խախտված է համարվում, երբ շեշտը դրվում է իմացական ոլորտի վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը։ Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան, անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին։ Երբ երեխաները զգում են, որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ, ավելի հետևողական են կատարում առաջադրանքը և սովորում են ավելին։

Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝ երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանկյունից.

Սոցիալական ազդեցություն

Մանկական հոգեբաների մեծ մասը միակարծիք են, և պնդում են, որ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալականացման գործում։ Հայտնվելով մանկապարտեզում՝ երեխայի էմոցիոնալ դաշտում տեղի են ունենում փոփոխություններ։ Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտֆիլմերի հերոսներին, ապա հիմա սկսում է կյանքի նոր փուլ, որտեղ ընկերներն իրական են։ Մանկապարտեզում կազմակերպվում են միջոցառումներ, նշվում են տարեդարձներ, կազմակերպվում են արշավներ, այցելում են թանգարաններ, թատրոններ։ Երեխան սովորում է արձագանքել իրադարձություններին։

Սահմանվում է հստակ օրակարգ. փոքրիկը զբոսնում է, սնվում, խաղում, սովորում, քնում է օրվա հստակ ժամերին։ Ճիշտ սահմանած օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիոնալ զարգացման կարևոր դրույթներից մեկն է։ Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք

փորձում է ճիշտ կատարել, օրինակ՝ սեղանները սպասքադրել, դասավորել խաղալիքները, ուտելուց հետո հավաքել սպասքը , ինքնուրույն հանվել, հագնվել և այլն: Նման պարզ հանձնարարություններ կատարելը զարգացնում է երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը:

Հոգեբանական ազդեցություն

Մանկապարտեզ հաճախելը դրական է ազդում նաև երեխայի հոգեկան զարգացման վրա: Ի տարբերություն տանը ծնողի, ընտանիքի անդամի կամ դայակի հսկողությամբ մեծանալուն՝ մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

Սոցիալական հմտությունները. նա սովորում է արդյունավետ հաղորդակցվել ուրիշ անհատների հետ, (ինչն էլ էականորեն տարբերվում է ընտանիքի անդամների հետ հարաբերություններից):

Թիմում աշխատելու հմտությունները, ձեռք է բերում նոր գաղափարներ, մոտեցումներ, ընդլայնում է աշխարհայացքը:

Մանկապարտեզ հաճախելն ունի նաև մի շարք այլ առավելություններ:

Կա հստակ սահմանված ռեժիմ: Ինչքան ուզում է հետևողական լինի ծնողը, դայակը կամ տատիկը, տնային պայմաններում օրվա ռեժիմին հետևելը շատ ավելի բարդ է, երբեմն նույնիսկ՝ անհնար:

Երեխաների հետ զբաղվում է հատուկ նրանց հետ աշխատելու համար մասնագիտացված անձնակազմ, ինչը ոչ միշտ է հնարավոր ապահովել խնամակալի դեպքում:

1.3 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցություն

Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է համագործակցության ձևերը՝ ընտանիքի սերտ համագործակցությունը նախադպրոցական կրթական հաստատությունների հետ: Ընտանիքի մանկապարտեզի համագոծակցության հիմքում ընկած է երկու սկզբունք.

- նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու,
- նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու: Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:

Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պատրաստ պիտի լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ: Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը տարածքի դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցների, մանկական ակումբների հետ:

Շատ կարևոր է ծնողների ակտիվ մասնակցությունը մանկապարտեզում իրականցվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացում:

Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛ տվյալ հաստատությունը: Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի և տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի կատարած ցանկացած լավ և վատ արարքի մասին է ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ:

Ծնողները կարող են ներգրավվել տարբեր կազմակերպչական նպատակներով: Օրինակ նյութական միջավայրի բարելավման ,էք կուրսիաների ժամանակ: Շփմանը նպաստում են նաև ծնողական հավաքները, սեմինարները, ծնողների կողմից խմբում իրականցվող գործունեությունները:

Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները դիտարկել երեխայի վարքը՝ այլ երեխաների հետ հարաբերություններում և ավելի խորն ըմբռնել երեխայի զարգացման հետ կապված հարցերը, ավելի հեշտորնեն են կարողանում երեխաների դաստիարակումը տանը:

Պարտեզի բուն գործունեությանը ծնողներին ներգրավելու նպատակով իրականացվում են բազմաթիվ և բազմաբնույթ նախագծեր:

Սեմինար - գործնական դաս ինչ-որ հարցի վերաբերյալ:

Դռների բաց օրեր.Կազմակերպվում է տարեկան 2 անգամ: Այս օրերին ծնողները կարող են հաճախել ռեժիմի պահերին, պարապմունքներին:

Թեմատիկ ցուցահանդեսները ծնողների հետ աշխատանքի արդյունավետ ձև են: Ցուցահանդեսին օգտագործվում են տարբեր նյութեր՝ գրքեր, մանկական նկարներ, ինքնաշեն խաղալիքներ, մանկական ասույթներ, լուսանկարներ և այլն:

Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, ապա դա ավելի է մտերմացնում մանկապարտեզի և ընտանիքի կապը: Միջոցառումները տալիս են հետևյալ արդյունքները.

Ծնողների ոգևորվածություն, համախմբածություն, մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի մեջ, ծնողների վստահության բարձրացում, երեխաների լավ վարք:

Ծնողների հետ աշխատանքի ամենատարածված ձևերն են ծնողական ժողովները, ծնողական հանձնաժողովները, անհատական զրույցները և խորհրդակցությունները:

Մեր ժամանակներում թերևս փոքր ինչ հնացած է թվում դաստիարակի այցը երեխայի ընտանիք:Սակայն կան բացառիկ դեպքեր, երբ Մշուշոտ է թվում երեխայի ընտանիքի առօրյան ու անվստահելի է նրա դաստիարակությունը:

●Զգացվում է ,որ կա բռնություն:

●Ֆիզիկական պատիժ է կիրառվում:

●Երեխան մեծանում է վախի ու սարսափի մթնոլորտում:

●Ականատեսն է ծնողների վեճի ու կռվի:

Նման դեպքերում երեխայի տուն այցելելն անհրաժեշտություն է ու պարտադիր: Դա առիթ է տալիս,որ երեխան ավելի մտերմանա մանկապարտեզի աշխատողների հետ,շփման դաշտը դառնա ավելի արդյունավետ:

Մենք ակտիվորեն օգտագործում ենք տարբեր ձևերավանդական փոխազդեցություններ (հարցումներ, հարցաթերթիկներ, ծնողական հանդիպումներ, տեսողական տեղեկատվություն, խորհրդատվություններ, թղթապանակներ ճանապարհորդություն, բաց օրեր, մանկապարտեզի ներկայացում) և ոչ ավանդական (տեսադարանային կայք MADOU, համատեղ ստեղծագործական նախագծեր, ծնող-երեխա նախագծեր, վարպետության դասեր, ստեղծագործական սեմինարներ, ոչ ավանդական ծնողական հանդիպումներ): Հղումի կաղապարը՝ (https://magazinalsu.ru/hy/pedagogicheskie-usloviya-partnerstvo-dou-i-semi-model-partnerstva.html © magazinalsu.ru): Մենք պարզեցինք, որ կան համագործակցության ավանդական ձևեր՝ առանց ծնողների ակտիվ մասնակցության և ոչ ավանդական, երբ

ծնողները ներգրավված են մանկապարտեզի կրթական գործընթացում: I. խումբ - համագործակցության ավանդական ձևեր. .Նախադպրոցական ներկայացում: Աշխատանքի այս ձևի արդյունքում ծնողները ծանոթանում են նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությանը, զարգացման ծրագրին և ուսուցիչների թիմին, ստանում են օգտակար տեղեկություններերեխաների հետ աշխատանքի բովանդակության, վճարովի և անվճար ծառայությունների մասին: .Խորհրդատվություն: Սովորաբար, կազմվում է խորհրդատվությունների համակարգ, որն իրականացվում է անհատապես կամ ծնողների ենթախմբի համար: Խմբային խորհրդակցությունների համար կարող եք հրավիրել տարբեր խմբերի ծնողների, ովքեր ունեն նույն խնդիրները կամ, ընդհակառակը, հաջողություններ դաստիարակության մեջ (քմահաճ երեխաներ. Նկարչության, երաժշտության ընդգծված ունակություններ ունեցող երեխաներ Խորհրդակցության նպատակներն են ծնողների կողմից որոշակի գիտելիքների և հմտությունների տիրապետումը. օգնել նրանց լուծել խնդրահարույց խնդիրները: Խորհրդակցության ձևերը տարբեր են (մասնագետի որակավորված հաղորդագրություն, որին հաջորդում է քննարկումը. Խորհրդակցությանը հրավիրվածների կողմից նախապես կարդացած հոդվածի քննարկում. Գործնական դաս, օրինակ `« Ինչպես բանաստեղծություն սովորեցնել երեխաներ »): .Տեսողական քարոզչություն: Ավանդական միջոցներ ծնողների համար նախատեսված տարբեր կրպակներ և անկյուններ տեսողական մանկավարժական քարոզչություն են: .Մանկավարժական զրույցներ ծնողների հետ: Ծնողներին ժամանակին աջակցություն տրամադրել դաստիարակության որոշակի հարցում: Զրույցներն անցկացվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային: Երկու դեպքում էլ նպատակը հստակ սահմանված է՝ ինչը հստակեցման կարիք ունի, ինչպես կարող ենք օգնել: Զրույցի բովանդակությունը լակոնիկ է, իմաստալից ծնողների համար, ներկայացված այնպես, որ խրախուսի զրուցակիցներին խոսել: Մանկավարժական աշխատողը պետք է կարողանա ոչ միայն խոսել, այլև լսել ծնողներին, արտահայտել նրանց հետաքրքրությունն ու բարեհաճությունը:

Ծնողները, հատկապես երիտասարդները, պետք է գործնական հմտություններ ձեռք բերեն երեխաներին մեծացնելու գործում: Ցանկալի է նրանց հրավիրել սեմինարների: Աշխատանքի այս ձևը հնարավորություն է տալիս խոսել ուսուցման մեթոդների և տեխնիկայի մասին և ցույց տալ դրանք. Ինչպես կարդալ գիրք, դիտել

նկարագարդումներ, խոսել կարդացածի մասին, ինչպես պատրաստել երեխայի ձեռքը գրելու համար, ինչպես վարժեցնել հոդակապը ապարատներ և այլն: .Բաց դռների օրը, լինելով աշխատանքի բավականին տարածված ձև, հնարավորություն է տալիս ծնողներին ծանոթացնել նախադպրոցական հաստատությանը, նրա ավանդույթներին, կանոններին, կրթական աշխատանքի առանձնահատկություններին, հետաքրքրել այն և ներգրավել մասնակցության մեջ: Այն իրականացվում է որպես շրջայց նախադպրոցական հաստատությունում՝ այցելելով այն խումբ, որտեղ դաստիարակվում են եկած ծնողների երեխաները: Կարող եք ցույց տալ նախադպրոցական հաստատության աշխատանքի մի հատված (երեխաների հավաքական աշխատանք, զբոսանքի հավաքում և այլն: Էքսկուրսիայից և դիտումից հետո ղեկավարը կամ մեթոդաբանը կխոսի ծնողների հետ, կպարզի նրանց տպավորությունները և կպատասխանի ծագած հարցերին: Ծնողների հանդիպումները անցկացվում են խմբային և ընդհանուր (ամբողջ հաստատության ծնողների համար: Ընդհանուր ժողովները կազմակերպվում են տարեկան 2-3 անգամ: Նրանք քննարկում են նոր ուսումնական տարվա խնդիրները, կրթական աշխատանքի արդյունքները, ֆիզիկական դաստիարակության հարցերը և առողջության ամառային շրջանի խնդիրները և այլն: Ընդհանուր ժողովին կարող եք հրավիրել բժիշկ, իրավաբան, մանկագիր: Նախատեսվում են ծնողների ներկայացումներ: Խմբի հանդիպումները տեղի են ունենում 2-3 ամիսը մեկ: Քննարկման է դրվում 2-3 հարց (մեկ հարցը պատրաստում է դաստիարակը, մյուսներին՝ ծնողներին կամ մասնագետներից որևէ մեկին կարող են հրավիրել խոսելու Ցանկալի է տարեկան մեկ հանդիպում նվիրել երեխաների դաստիարակության ընտանեկան փորձի քննարկմանը: Ընտրվում է մի թեմա, որն արդիական է այս խմբի համար, օրինակ՝ «Ինչու՞ մեր երեխաները չեն սիրում աշխատել»: .Ծնողների խմբային հանդիպումներ: Pնողներին ներկայացվում են մանկապարտեզում և ընտանիքում որոշակի տարիքի երեխաների դաստիարակության բովանդակությունը, խնդիրները և մեթոդները: Խորհուրդ է տրվում անցկացնել տարեկան 3-4 հանդիպում ՝ 1,5 ժամ տևողությամբ: .Ընտանեկան այց: Յուրաքանչյուրի դաստիարակ տարիքային խումբպետք է այցելի իր աշակերտների ընտանիքները: Յուրաքանչյուր այց ունի իր նպատակը: Առաջին ընտանեկան այցի նպատակն է պարզել ընդհանուր դրույթներ և

պայմաններընտանեկան կրթություն, երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում նախատեսվում են վերայցելություններ: .Բաց դասեր երեխաների հետ նախադպրոցական ուսումնական հաստատությունում `ծնողների համար: Ծնողներին ծանոթացնում են նախադպրոցական ուսումնական հաստատությունում դասերի անցկացման կառուցվածքին և առանձնահատկություններին: Դասին կարող եք ներառել ծնողների հետ զրույցի տարրեր:

II. խումբ - համագործակցության ոչ ավանդական ձևեր. Ծնողական կոնֆերանսներ: Համաժողովի հիմնական նպատակն է ընտանեկան կրթության ոլորտում փորձի փոխանակումը: Ծնողները նախապես հաղորդագրություն են պատրաստում, ուսուցիչը, անհրաժեշտության դեպքում, օգնություն է ցուցաբերում թեմայի ընտրության, խոսքի ձևավորման հարցում: Գիտաժողովին կարող է ելույթ ունենալ մասնագետ: Նրա ելույթը տրվում է «որպես սերմ» քննարկում հրահրելու համար, իսկ հնարավորության դեպքում ` քննարկում: Ընտանեկան ակումբներ: Ի տարբերություն ծնողական հանդիպումների, որոնք հիմնված են հաղորդակցման ուսուցողական և ուսուցողական ձևի վրա, ակումբը հարաբերություններ է ստեղծում ընտանիքի հետ կամավորության և անձնական հետաքրքրությունների սկզբունքների հիման վրա: Նման ակումբում մարդկանց միավորում է ընդհանուր խնդիրը և համատեղ որոնումը `երեխային աջակցության օպտիմալ ձևերի համար: Հանդիպումների թեմաները ձևակերպվում և պահանջվում են ծնողների կողմից: Ընտանեկան ակումբները դինամիկ կառույցներ են: Նրանք կարող են միավորվել մեկ մեծ ակումբի կամ բաժանվել ավելի փոքրերի՝ ամեն ինչ կախված է հանդիպման թեմայից և կազմակերպիչների գաղափարից:

Երեխաների դաստիարակության, ուսուցման և զարգացման խնդիրներին նվիրված հատուկ գրականության գրադարանը նշանակալի օգնություն է ակումբների աշխատանքում: Հաշվի առնելով ծնողների զբաղվածությունը, օգտագործվում են նաև ընտանիքի հետ շփման այնպիսի ոչ ավանդական ձևեր, ինչպիսիք են՝ «ծնողական փոստ» և «Օգնության գիծ»: Օգնության գիծն օգնում է ծնողներին անանուն կերպով պարզել իրենց համար նշանակալից խնդիրները, զգուշացնել ուսուցիչներին երեխաների նկատված անսովոր դրսևորումների մասին: .Խաղերի գրադարան. Քանի որ խաղը պահանջում է մեծահասակի մասնակցություն, այն ստիպում է ծնողին

շփվել երեխայի հետ: Եթե տնային խաղերի ավանդույթը սերմանվի, գրադարանում հայտնվում են մեծահասակների կողմից երեխաների հետ հորինված նոր խաղեր: .Կլոր սեղան ծնողների հետ: Ոչ ավանդական պայմաններում `մասնագետների պարտադիր մասնակցությամբ, դրանք քննարկվում են ծնողների հետ փաստացի խնդիրներ կրթություն. Լուսանկարչական թերթեր. Բովանդակությունը ընտրում են ոչ միայն նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատակիցները, այլև ծնողները: Թերթի յուրաքանչյուր համարում կան լուսանկարներ, որոնք ֆիքսում են հետաքրքիր պահեր մանկապարտեզի կյանքից `կրթական գործընթացի բոլոր առարկաների մասնակցությամբ: .Ընտանեկան տաղանդների համար մրցումների կազմակերպում: Մանկապարտեզի ընտանիքներից յուրաքանչյուրն ունի իր հետաքրքրությունները, կարողությունները և տաղանդները: Մասնակցելով այս մրցումներին ` ծնողները ոչ միայն երեխաներին ստիպում են հպարտություն և հարգանք զգալ իրենց նկատմամբ, այլև զարգացնում են այս կրթական հաստատությանը պատկանելու զգացումը: Ծնողները սկսում են գիտակցել, որ իրենք այն աշխարհի մի մասն են, որտեղ իրենց երեխաներն իրենց ժամանակի մեծ մասն են անցկացնում: Նրանք սկսում են նախաձեռնություն ցուցաբերել մանկապարտեզի և ընտանիքի ընդհանուր գործերում: Հղումի կաղապարը՝ [Ագավելյան Մ.Գ. «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների փոխազդեցությունը ծնողների հետ» - Մ. Ոլորտ, 2009]:

Որպես դաստիարակ կարևորում եմ ծնողների և մանկապարտեզի արդյունավետ համագործակցությունը: Կապանի թիվ 6 ՆՈՒՀ-ը կանոնավոր կերպով ծրագրեր է իրականացնում ծնողների հետ համատեղ, ինչպես նաև անցկացնում է ոչ ավանդական ծնողական հանդիպումներ՝ սպորտլանդիաներ,վարպետության դասեր ծնողների նախաձեռնությամբ, ցուցահանդես-մրցույթներ, էքսկուրսիաներ, ինտելեկտուալ խաղեր երեխաների և ծնողների համատեղ մասնակցությամբ: Նման միջոցառումները ոգևորում են երեխաներին, ինքնավստահ են դառնում,նրանց մոտ զարգանում է ֆիզիկական ակտիվությունը, ստեղծագործելու կարողությունը:

Եզրակացություն, առաջարկություն

Այսպիսով 'համագործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սաների անհատականության և կրթական աշխատանքի վրա:

Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարոյական բարձր ու բարոյական որակների վրա:

Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողներին:

Կարևոր է փոխադարձ հարգանքն ու գիտակցումը,որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող ,դաստիարակվածու գիտակից անձնավորության ձևավորմանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության ,դաստիարակության և զարգացման հարցերում ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության շահերի համատեղում:

Հարկավոր է հաճախակի կազմակերպել միջոցառումներ, և ներգրավել ծնողներին այդ միջոցառումներին:

Գրականության ցանկ

1.Ա.Ա.Մարության,Ա.Մ.Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» Երևան-2008

2.Նախաշավիղ 5-2016

3.Նախաշավիղ 1-2013

4.Հոգեբանի բլոգ

5.https://magazinalsu.ru/hy/pedagogicheskie-usloviya-partnerstvo-dou-i-semi-model-partnerstva.html

6.Ագավելյան Մ.Գ. «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների փոխազդեցությունը ծնողների հետ» - Մ. Ոլորտ, 2009: